ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011թ. դեկտեմբերի 16

թիվ 191 - Ա

ԱԼԵՔՍԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա/ ենթակետով և 16-րդ հոդվածի 3-րդ կետի բ/ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը հաստատելու մասին>> թիվ 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով <<Բերքառատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար 2011 թվականի դեկտեմբերի 7-ին անցկացված մրցույթի արդյունքները և Ա. Ալեքսանյանի անձնական դիմումը՝ ***կարգադրում եմ.***

1. 2011 թվականի դեկտեմբերի 19-ից Ալեքսան Մկրտիչի Ալեքսանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Բերքառատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր մինչև նրա 65 տարին լրանալը՝ լուծելով 2011 թվականի օգոստոսի 2-ին նրա հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ԱԱՀԱԿՅԱՆ